ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«19» դեկտեմբերի 2023 թվականի N: 584 - Ա ք.Գյումրի

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, 163-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 6-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 69-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման հավելվածի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Արմենուհի Գրիգորյանի 2023 թվականի դեկտեմբերի 15-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արմենուհի Գրիգորյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդից մնացած մասը՝ 15 աշխատանքային օր՝ 2023 թվականի դեկտեմբերի 28-ից մինչև 2024 թվականի հունվարի 19-ը ներառյալ:

2. Արմենուհի Գրիգորյանի արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել նույն կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Լիլիթ Գաբրիելյանին:

Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է